

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ

ՄԻՒԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016ԹԹ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ
2013-2016ԹԹ.

Կազմեց համայնքի ղեկավար



Լ. Ս. ԴԻԼԲԱՐՅԱՆ



Քննարկվել և հաստատվել է Միխայելովկա համայնքի
ավագանու 2013թ-ի փետրվարի 21-ի նիստի թիվ 04-ն
որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Առանձին բնագավառներում առաջնահերթ խնդիրների, ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները՝

ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունավետ կառավարում իրականացնելու գլխավոր պայմաններից մեկը՝ գործունեության համաչափ ծրագրավորումն է գալիք ժամանակաշրջանի տարբեր հատվածներով: Սահմանափակ ֆինանսների արդյունավետ ծախսումը, նոր միջոցների ներգրավումը հարկերի հավաքագրմամբ, կնպաստեն համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Ռազմավարական քաղաքականության տեսանկյունից

Միխայելովկա համայնքի քառամյա ծրագրի հեռանկարային ուղղությունները հետևյալն են.

Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացում

1. Մշակույթային համակարգի բարեփոխում,
2. Ներհամայնքային ճանապարհների վերականգնում, ասֆալտապատում, փողոցների ընթացիկ վերանորոգում և լուսավորում
3. Գործազրկության կրճակում, աշխատատեղերի ստեղծում
4. Բնակչության իրավունքների պաշտպանություն
5. Կոմունալ ծառայությունների բարելավում

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ Է

ՀԵՏԵՎՅԱԼ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

1. Գյուղատնտեսության զարգացմանը, գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը և կոլեկտիվների ստեղծմանը
2. Բնակչության սպասարկման և կոմունալ ծառայությունների բարելավմանը
3. Բնակչության ֆոնդի ավելացմանը, բնակչության արտագաղթի պակասեցմանը
4. Նախադպրոցական, դպրոցական կրթության բարեփոխմանը, մշակութային, մարզական և սպորտային դաստիարակությանը
5. Տրանսպորտային սպասարկման բարելավմանը, փողոցների բարեկարգմանը
6. Համայնքում աղբահանության կազմակերպման և սանիտարահիգիենիկ պայմանների ստեղծմանը:
7. Արտակարգ իրավիճակների վերացմանը: